

— ≡ Ս Ի Ո Ն ≡ —

Լ.Ա. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1957

«ՃԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ»

ԹԻԻ 4-5

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Թ. 153/21

30 Մարտ 1957

Ս. ԷՋՄԻԱՄԻՆ

ԱՄԵՆԱՊԱՏԻԻ Տ. ՏԻՐԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԱՅԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐԲ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

«Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Այսօր Չասիկ է, սիրելիք Մեր, եւ յարուցեալ Փրկչի Իջման Ս. Սեղանէն, ամենայն հայոց Մայր Տաճարի զանգակները վերսին ցնծագին կը դողանցեն եւ գէպի բոլոր հորիզոնները բոլորիդ կը բերեն աւեսխոր խաչեալ եւ քաղեալ Քրիստոսի հրաւափառ յարութեան:

Շնորհաբաւ յայ աւեսխով կը շնորհաւորենք Ձերդ Ամենապատուօրինը, Մբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ հաւատացեալ համայն հայ ժողովուրդը, մաղթելով, որ Տէրը բոլորիդ պարգեւէ՛ քաջաողջութիւն, արեւատարիւն եւ գործոց յաջողութիւն:

Բարի Չասիկ Ձեզ բոլորիդ, հարազատներ Մեր: Մբոց Յակոբեանց աւանդապահ եւ նախանձայոյզ Միաբանութեան բոլոր անդամներուդ սրտերուն մէջ բող ծագի եւ խայտայ սուրբ յարութեան ուրախութիւնը եւ բող շահաւայ լոյսը Ձեր հոգիներուն, Ձեր օրերուն, Ձեր կեանքի նախապահին եւ Ձեր ձեռաց գործերուն, միշտ հաստատ Ձեր նախնեաց սուրբ հաւատքին մէջ, միշտ սիրով եւ միաբան խաղաղութեամբ, միշտ հաւատարիմ Մայր Եկեղեցիին, Մայր Աթոռին եւ Մայր Հողին:

Շնորհ եւ զօրութիւն ամենասուրբ յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ այժմ եւ միշտ, ամէն:

Նորայրական սիրով եւ ողջունիւ՛

ՎԱԶԳԷՆ Ա.

ՆԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

